

Հոկտեմբերի 18, 2016թ.

ԿԱՐՄԻՔ

«Կիսաբաց լուսամուտներ» հաղորդման ինտերնետային տարբերակում պոռնոգրաֆիկ բովանդակությամբ դրվագներ ցուցադրելու վերաբերյալ

2016 թվականի սեպտեմբերի 23-ին [YouTube](https://www.youtube.com/watch?v=50047-kisabac-lusamutner-gjvel-kareli-e-23-09-16-anons)-ում «Կիսաբաց լուսամուտներ»-ի պաշտոնական ալիքով ցուցադրվել է հաղորդաշարի հերթական թողարկումը, որը վերաբերում էր ենթադրաբար սեռական բռնության ենթարկված մի անչափահաս տղայի պատմությանը: Հաղորդումն ամբողջությամբ կարելի է դիտել այստեղ՝ <http://merojax.tv/tv-shows/kisabac-lusamutner/item/50047-kisabac-lusamutner-gjvel-kareli-e-23-09-16-anons>:

Հաղորդման ընթացքում ցուցադրվեցին պոռնոգրաֆիկ բնույթի դրվագներ և սեռական գործողության տեսարաններ մի ինտերնետային կայքից, որը հաղորդման փորձագետներից մեկը վերագրեց ՀՀ-ում գործող կրոնական մի կազմակերպության (տե՛ս 19:19-20:18): Դատելով հաղորդավարի հայտարարությունից՝ հաղորդումն ի սկզբանե պատրաստված է եղել հեռուստատեսությամբ հեռարձակելու համար (հաղորդավարը տեսանյութը ցուցադրելուց առաջ զգուշացրել է «Էկրանների» առջևից հեռացնել երեխաներին): Բացի այդ, պոռնոգրաֆիկ նյութերի ցուցադրման ժամանակ էկրանին հետևյալ տեքստն է հայտնվում՝ «սա ցուցադրվել է հեռուստատեսությամբ ոչ ամբողջական տարբերակով»: Այդուհանդերձ, ըստ տեղեկությունների, հեռուստատեսությամբ հաղորդումը ցուցադրելիս նշված տեսարանները հեռացված են եղել:

Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքի 22-րդ հոդվածն արգելում է պոռնկագրության տարածումը և էրոտիկ բնույթի կոնտենտի հեռարձակումը ժամը 06.00-ից 24.00-ը: Սա հեռուստատեսության ոլորտում կոնտենտի կարգավորման օրինակներից մեկն է: Ընդհանուր առմամբ, այս ոլորտում առկա է պետական կարգավորում՝ ի դեմս վերոնշյալ համապարփակ օրենքի և կարգավորող մարմինների (օրինակ, ՀՌԱՀ-ի): Սակայն նույնը չի կարելի է ասել համացանցի մասին: Համացանցը մեծամասամբ ինքնավար է, ինքնակարգավորվող, իսկ ցանկացած փորձ այս ոլորտը կարգավորելու ուղղությամբ ի սկզբանե դատապարտված է ձախողման՝ ելնելով համացանցի առանձնահատկությունից: Սակայն դա չի նշանակում, որ բարոյականության, էթիկայի և օրենքի նորմերը դադարում են գործել այս տիրույթում: Ատելության խոսքը, բռնության քարոզը, բարոյականության դեմ ուղղված կոնտենտը

առաջացնում է քրեական, քաղաքացիական կամ վարչական պատասխանատվություն:
Սակայն խնդիրն այն է, որ թվային տեխնոլոգիաների զարգացումը նպաստավոր պայմաններ է ստեղծում տարբեր տեղեկատվական հարթակների միավորման համար, որի պայմաններում վնասակար կոնտենտը հեշտությամբ տեղափոխվում է մի հարթակից մյուսը, ինչը հաճախ հանգեցնում է իրավական վակուումի՝ խախտման դեմ բացակայում է իրավական պաշտպանության միջոցը:

Տվյալ դեպքում հեռուստահաղորդման ընթացքում հրապարակայնորեն ցուցադրվել է մի կոնտենտ, որն առերևույթ ուղղված է բարոյականության հասարակական արժեքների դեմ: Անկախ այն հանգամանքից, թե կոնտենտը քրեական իրավունքի հիմքով օբյեկտիվորեն համարվում է պոռնկագրական նյութ, թե ոչ (Քրեական օրենսգրքի 263-րդ հոդված՝ պոռնկագրական նյութեր տարածելը), այն առերևույթ հակասում է բարոյականության մասին հասարակական պատկերացումներին: Հետևաբար, նման նյութի հրապարակային ցուցադրումը կարող էր ցնցել և անհանգստություն պատճառել հասարակության լայն շրջանակներին, այդ թվում նաև խոցելի խմբերին, օրինակ, անչափահասներին, սեռական բռնության զոհերին, իսկ տվյալ դեպքում՝ նաև կրոնական փոքրամասնություններին): Հետևաբար, նման նյութի հրապարակային ցուցադրումը կարող է առաջացնել քրեական և/կամ քաղաքացիական պատասխանատվություն:

Եզրակացություն

«Կիսաբաց լուսամուտներ» հաղորդումը հանրությանը մատուցվել է ոչ թե հեռուստատեսության, այլ համացանցի հարթակից: Այս հանգամանքը էապես նվազեցրել է լսարանի շրջանակները, սակայն փոխարենը կոնտենտը դարձրել է հանրային սեփականություն՝ ժամանակի ու տարածության մեջ անվերահսկելի: Եթե կոնտենտը տարածվեր հեռուստատեսային հաղորդման միջոցով, ՀՌԱՀ-ը լիովին իրավասու կլիներ միջամտել օրենքի ուժով և հեռուստատեսությանը ենթարկել վարչական պատասխանատվության՝ ղեկավարվելով Հեռուստատեսության և Ռադիոյի մասին օրենքի 24-րդ հոդվածով և դրա հիման վրա կայացված իր 15/02/2010 թիվ N1-Ն որոշմամբ սահմանված չափորոշիչներով¹: Սակայն կոնտենտը տարածվել է ինտերնետ կայքի՝ www.youtube.com-ի միջոցով, որը տվյալ դեպքում հանդես է գալիս որպես տեղեկության մեդիում կամ կրիչ, որի պարագայում ՀՌԱՀ-ը իրավագրություն չունի միջամտել, քանի որ Հեռուստատեսության և ռադիոյի մասին օրենքը կիրառելի չէ նման իրավահարաբերությունների վրա: Ստացվում է, որ նույն հաղորդումը հեռուստատեսությամբ հեռարձակելիս առաջացնում է պատասխանատվություն, իսկ համացանցով տարածելիս՝ ոչ: Մինչդեռ, ինչպես Հայաստանում, այնպես էլ գլոբալ տիրույթում արագորեն զարգանում է ինտերնետ

¹ՀՌԱՀ թիվ N1-Ն որոշում՝ «Էրոտիկ բնույթի հեռուստառադիոհաղորդումների, սարսափ և ակնհայտ բռնություն պարունակող ֆիլմերի, ինչպես նաև անչափահասների առողջության, մտավոր և ֆիզիկական զարգացման, դաստիարակության վրա հնարավոր բացասական ազդեցություն ունեցող հաղորդումների չափորոշիչները հաստատելու մասին»:

հեռուստատեսությունը և աստիճանաբար մրցակցություն կազմում էթերային հեռուստատեսությանը:

«Այս կարծիքը պատրաստվել է ԵԱՀԿ երևանյան գրասենյակի աջակցությամբ «Խոսքի ազատության ոլորտում վեճերի արտադատական լուծումների խթանումը Հայաստանում» ծրագրի շրջանակներում: Այստեղ արտահայտված տեսակետներն ու հետևությունները հեղինակներինն են և պարտադիր չէ, որ արտացոլեն ԵԱՀԿ-ի կամ ԵԱՀԿ երևանյան գրասենյակի տեսակետները:»

Տեղեկատվական վեճերի խորհուրդ

Արա Ղազարյան - «Արնի Քնսայթ» փաստաբանական
գրասենյակի փոխտնօրեն

Մանանա Ասլամազյան - անկախ մեդիափորձագետ

Բորիս Նավասարդյան - Երևանի մամուլի ակումբի նախագահ

Արամ Աբրահամյան - «Առավոտ» օրաթերթի գլխավոր խմբագիր

Գեղամ Վարդանյան - Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի պրոդյուսեր